ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 1998 թվականի №44
ք. Երևան

«Շոգու և տաք ջրի տեսքով ջերմային էներգիայի մատակարարման (առք ու վաճառքի)» պայմանագրի օրինակելի ձևի հաստատման մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել «Շոգու և տաք ջրի տեսքով ջերմային էներգիայի մատակարարման (առք ու վաճառքի)» պայմանագրի օրինակելի ձևը (կցվում է):
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի շոգու և տաք ջրի տեսքով ջերմային էներգիա մատակարարող ձեռնարկություններին և ընկերություններին՝ եռամսյա ժամկետում նշված օրինակելի ձևերով սպառողների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
փոխնախագահ՝ **Ն.Գրիգորյան**